ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Լիլիա Շուշանյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ֆրանսիայի Հանրապետություն, 2019 թ. հունիսի 17-ից 21-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

ԱՃԹՆ միջազգային խորհուրդ, ՏՀԶԿ գլխավոր քարտուղարի՝ զարգացման գծով հատուկ խորհրդական

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ԱՃԹՆ միջազգային համաժողովին և Ռեսուրսների վրա հիմնված զարգացման մասին քաղաքականության երկխոսության ՏՀԶԿ լիագումար հանդիպմանը

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Երեք տարին մեկ անցկացվող ԱՃԹՆ գլոբալ համաժողովը 52 անդամ երկրների, արդյունահանող ոլորտի, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների և աջակից պետությունների 1000-ից ավել ներկայացուցիչների համար հարթակ է հանդիսանում ոլորտի կառավարման և ԱՃԹՆ-ի ազդեցության հետ կապված բազմաբովանդակ քննարկումների համար: 2019 թվականի համաժողովի ընթացքում մասնակցել եմ լիագումար նիստերի քննարկումների հետևյալ թեմաներով՝

- Արդյունահանող ոլորտում բաց տվյալները՝ որպես վստահության հիմք,
- Լիմայի համաժողովից Փարիզի համաժողով ճանապարհին հիմնական ձեռքբերումները,
- Թափանցիկության դերը արդյունահանող ճյուղերում կոռուպցիայի դեմ պայքարում:

Ռեսուրսների վրա հիմնված զարգացման մասին քաղաքականության երկխոսության գործընթացը ենթադրում է ՏՀԶԿ անդամ և գործընկեր երկրների միջև քննարկումների կազմակերպում և փորձի փոխանակում ռեսուրսների կառավարման զարգացումը խթանելու նպատակով: Քննարկված հիմնական թեմաներն էին՝

- ԱՃԹՆ-ի և ՏՀԶԿ-ի կողմից համատեղ ձևաչափի մշակման անհրաժեշտությունը արտադրանքի առքուվաճառքի մեջ ընդգրկված ընկերությունների/պետական ձեռնարկությունների համար,
- Հարկային բազայի քայքայման թեմայով ՏՀԶԿ և ՄԿՖ-ի համատեղ աշխատանքներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Որպես Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախագահությունը ստանձնած երկրի ներկայացուցիչ բացման խոսքով հանդես եմ եկել ֆրանկոֆոն երկրների մասնակցությամբ առանձին հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են նաև պայմանագրերի թափանցիկությանն առնչվող հարցեր, ներկայացրել 2018 թվականին մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների պայմանագրերը հրապարակային դարձնելու փորձը: Նշել եմ նաև, որ ֆրանկոֆոն երկրները գնալով ավելի մեծ կարևորություն են տալիս տարբեր գործընթացներում թափանցիկության ապահովմանը, ինչի ապացույցն է նաև Երևանում, ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի ընթացքում, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության քաղաքականության թափանցիկության վերաբերյալ ընդունված փաստաթուղթը:

Համաժողովի լիագումար հանդիպումներից զատ որպես խոսնակ հանդես եմ եկել տվյալների համակարգային հրապարակման մեխանիզմների պանելային քննարկմանը և ներկայացրել Հայաստանում ներդրված նորարարական հարթակը: Ընդգծել եմ, որ երկրների համար ուղենշային պետք է լինի թղթային հաշվետվություններից անցումը դեպի էլեկտրոնային և առավել թիրախային տվյալներ ստանալուն, իսկ հետագայում պետք է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մեծածավալ տվյալների փոխարեն արդյունավետ տեղեկատվության ձևավորման խնդրին:

Հանդես եմ եկել նաև որպես այլ՝ իրական սեփականատերերի մասին տվյալների հրապարակման թեմայով լիագումար քննարկման խոսնակ և ներկայացրել այդ ուղղությամբ Հայաստանում տարվող աշխատանքները, ընդունված օրենսդրական փաթեթը և անհրաժեշտ հետագա քայլերը:

Ֆրանսիա կատարած այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել ԱՃԹՆ միջազգային քարտուղարության հետ 2019 թվականին Հայաստանի կողմից առաջին անգամ ԱՃԹՆ-ի

ստանդարտի վավերացման գործընթաց անցնելու և նախապատրաստական աշխատանքների շուրջ: Հայտնել եմ, որ արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել Գերմանիայի ԱՃԹՆ համակարգողի հետ մինչ այդ Հայաստան այցելելու և վավերացմանը նախապատրաստվելու աշխատանքներում փորձի փոխանակման համար, իսկ սեպտեմբերին Հայաստանը կընդունի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների այցը:

Երկկողմանի հանդիպման ժամանակ Համաշխարհային բանկի ներկայացուցչի հետ քննարկել եմ ԱՃԳԾԱ դրամաշնորհային երկու ծրագրերի ընթացքը Հայաստանում, ինչպես նաև հետագա համագործակցության ուղիները:

Բաց կառավարման գործընկերության փոխտնօրենի հետ հանդիպմանը քննարկվել են Հայաստանի մոտեցումները իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստր ստեղծելու վերաբերյալ, առաջարկություն եմ ներկայացրել ազգային ռեգիստրների համար առավել համապարփակ և մանրամասն տեխնիկական պահանջներով միասնական ձևաչափ ունենալու մասին, որը կնպաստի նույնական ռեգիստրների առկայությամբ միջազգային ցանցի ստեղծմանը:

ՏՀԶԿ տրանսֆերային գնագոյացման և ֆինանսական գործարքների գծով ավագ խորհրդականի հետ քննարկել եմ հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ քաղաքականության մի շարք հարցեր և պայմանավորվածություն ձեռք բերել Հայաստանում քննարկել ՊԵԿ-ի ներկայացուցիչների հետ իրենց կարիքները հնարավոր վերապատրաստումներ կազմակերպելու նպատակով, մասնավորապես հարկային բազայի քայքայման և շահույթի տեղափոխման թեմայով:

Մեծ յոթնյակի կողմից հիմնադրված CONNEX նախաձեռնության քարտուղարության ղեկավարի հետ հանդիպման ընթացքում ծանոթացել եմ ծրագրի հիմնական նպատակներին և ընթացակարգերին՝ քննարկելով Հայաստանի հետ համագործակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել իրենց ներկայացնել Հայաստանի համար հետաքրքրություն ներկայացնող դեպքեր, որտեղ ցանկալի կլինի դիտարկել ծրագրով տրամադրվող խորհրդատվություն:

Հանքարդյունաբերության միջկառավարական ֆորումի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում քննարկել եմ Հայաստանի կողմից ֆորումին անդամակցելու հնարավոր հետաքրքրվածության, ինչպես նաև ֆորումին անդամկցելու դեպքում երկրի համար ակնկալվող օգուտների հարցերը:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԱՃԹՆ-ի համաժողովի ընթացքում հաստատվեց ԱՃԹՆ-ի վերանայված ստանդարտը, որը համալրվել է պայմանագրերի հրապարակման, բնապահպանական հաշվետվողականության, տվյալների համակարգային բացահայտման, գենդերային և մի շարք նոր պահանջներով: Հայաստանի Հանրապետությունը, որպես անդամ երկիր, հետագա ազգային զեկույցները կազմելիս պետք է ապահովի այս նոր պահանջների իրականացումը:

Հայաստանը երեք տարին մեկ անգամ տեղի ունեցող ԱՃԹՆ համաշխարհային համաժողովի ժամանակ 52 երկրների շարքում արժանացավ ԱՃԹՆ-ի նախագահի մրցանակին՝ որպես նորեկ երկիր, որի անդամակցումն ԱՃԹՆ-ին սկսվեց բարձր տեմպերով և նորարարությամբ:

Լիլիա Շուշանյան
26.06.2019թ.